

այն գաւառները՝ որ վրաց ու Աղուանից հետ էին, պահելով հանդերձ իրենց լեզուն, վրացի և Աղուան կը նկատուէին:

Սամուէլի այս դէպքը պատճառն եղաւ, որով Աղուանը վերստին հայ եկեղեցւոյ գերիշխանութիւնը ճանչցան: Որովհետեւ նոյն իսկ հայ-աղուան իշխանները՝ որ Աշոտի հետ Պարտաւը պաշարած բանակիւր էին, այս ինքնընտրութեան դէմ բողոքեցին մեր Գէորգ Բ. կաթողիկոսին (876-897): Գէորգ Աշոտի կը գրէ՝ որ գործը իսկապէս թեմայի անհարմար անարտէս: Իմաստուններն Աշոտ կը համոզէ աղուան իշխանները՝ որ առժամայն հաւանին Սամուէլի և Միսայէլի ըրածներուն, և թէ իրենց հայրապետը ձեռնադրութիւնը Հայոցմէ առնու. Գէորգ կաթողիկոսին ալ կը գրէ այս բանս: Անձնահաճ Սամուէլ թէեւ ակամայ, բայց ստիպուած բոլոր Աղուանից կամակցութենէն, կը զիջանի երթալ Գուգին և հոն, ըստ պատմչին բացատրութեան՝ « զերկրորդն առնու ձեռնադրութիւն » (877):

Այսպէս ուրեմն Միսայէլն ալ կը հաստատուի իր թեմին մէջ, հաւանութեամբ Գէորգ կաթողիկոսին, իբրեւ եպիսկոպոս հայ-աղուանից: Իր այս հովուական պաշտօնին մէջն է՝ որ անիկայ ցոյց տուած պիտի ըլլայ իր իմաստասէրի միտքը. գրելով թերեւս շատ ճառեր՝ որոնցմէ սակայն առժամա միայն հատ մը առձեռն ունինք. թերեւս ասիկայ շարժառիթ մ'ըլլայ ուրիշ անհանուն հեղինակութիւններ կամ թարգմանութիւններ ալ իրեն սեփականելու:

Խաչի վրայ գրած այս ճառէն դատելով՝ բաւական ու բազմակողմանի հմտութեամբ կըրթուած միտք մը կ'երեւի Միսայէլ եպիսկոպոս: Լեզուի մասին՝ աւելի նորութիւններ յուսալի էր գտնել իր քով, քանի որ բնակիչ էր գաւառի մը՝ որ զուտ հայկական չէր: Բայց ինք՝ իբրեւ գրեթէ մարդ շատ բան կարդացեր է. իր լեզուն՝ ոչ իր գաւառին է և ոչ իր ժամանակին. նախորդ դարերու և դպրոցներու ուսանող մըն է, որ յաջողած է սահուն ու սովորական կերպով մը գրելու:

Հ. Ն. ԱՆՏՐԻԿԵԱՆ

ՆՈՐ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ

ՍՈՍԱԼ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ

Փարպեցու վերջին տպագրութիւնը, որ կատարուել է աշխատութեամբ Գալուստ Տէր-Միկայիլանի և Ստեփան Մայիսեանի (Տփլիս, 1904), որքան էլ խնամուած լինի և ամենից կատարեալը, այնու ամենայնիւ ներկայացնում է մէկից աւել ընթերցումներ, որ չեն բաւականացնում տրամաբանական պահանջներին, և հէնց այս պատճառաւ զգացնել են տալիս նորանոր ուղղագրութիւնների կարիքը:

Փարպեցու բնագրաքննական հարցով զբաղվել են բազմաթիւ գիտնականներ. բաց ի հրատարակչներից, նաեւ Նորայր Բազումեյանի (Հայկական բառարանութիւն, Կոստանդնուպոլիս, 1880) Ստ. Մայիսեան (Ողորտիւններ Ղ. Փարպեցու պատմութեան և քրիի, Հանդէս Հայագիտութեան, 1903, Բ. հտ. Բ. տետր.) Ստեփան Վ. Պալանտ (Բաւոստի հանդիսում), Գեորգ. Հ. Թադեոս Վ. Թադեոս, Թագադիր Աբրայ (Բազմաթիւ, 1905, դեկտ. տետ. և հոկտ. 1904):

Սրանց վրայ պէտք է աւելացնել Հ. Բ. Ստեփանի « Երկու խօսք Ղ. Փարպեցու նոր տպագրութեան առթիւ » (Բազմաթիւ, 1905, էջ 52), որ մի խղճահար համեմատութիւն է Ս. Ղազարու ձեռագիրներին և նորագոյն տպագրութեան:

Գնահատելի է սրանցից մատուցուած ծառայութիւնը. բայց հայ գրականութիւնը այն արտերիցն է՝ որ որքան էլ մշակվեն՝ կարող են նորանոր հունձքեր արտադրել:

Այստեղ՝ Հայկական Ճեմարանի ուշադրութեանն եմ առաջարկում իմ մի քանի ուղղագրութիւններին՝ կատարված վերջին տպագրութեան վերայ (Տփլիս, 1904):

1. « Առանց Արեւաց կռուոյ ».

Փարպեցի (էջ 75, տող 12, գլուխ 106) ասում է. « Խորհուրդքի մէջ առեալ (Պարսից), թէ որպէս հնարեացին որսալ զարան փախստականն առանց Արեւաց կռուոյ և ըրճենը ըստ կամաց և ի հարկադրութեան կացուցանել զաշխարհս Հայոց, և յայս միտս հաստատեալ կային՝ թէ բայց միայն սուտ երգմամբ և սնոտի խոստմամբ հաւանեցուցանել զմիտս որերոյն կարասցեն, առանց կռուոյ »:

Առաջարկում եմ՝ փոխանակ « առանց Արեւաց կռուոյ » կարդալ « առանց արևուն կռուոյ »:

2. « Աւել... որ լինի ճուր ».

ԽԳ գլխում (էջ 80, տող 17) Փարպեցի ասում է. « Աւել, ծնանի հուր յերկաթոյ և ի քարէ և ի ջրոյ և ի փայտէ. այլ է և ուրիս սպիտակ, որ ի նմանէ լինի հուր. լինի ի կաւարծաթոյ հուր, յորժամ ընդդէմ արեգականն ող շողացուցեալ դիցէ »:

Դժուար է թէ մի ո՛ր ժամանակում՝ ոչք կարող եղած լինի հոգ արտադրել... այս խօսքի անտեղութիւնը աննկատ է անցել հրատարակչներին: Առաջարկում եմ կարդալ՝ « Աղն սպիտակ, որ ի նմանէ լինի հուր »:

Դա հէնց այն աղն է, որ ժողովրդից շորայ է կոչվում. գտնուում է փուտքարէ (tufe) որմերի վերայ. Թաց շորի կտորով չորացնում են նրան, ապա որպէս գալ՝ կայծքարով վառում են՝ կրակ շինելու համար:

3. « Զկերպարանն Բանդերձիցս...
զնեն ի Բունաց ».

Գիւտ՝ առ. Պերոզ գրած Թղթի մէջ՝ մի ինչ որ արգագարական տեղեկութիւն է տալիս (Գ. ԿԳ. էջ 114, տող 8). « Զկերպարան հանդերձիցս՝ զոր ունիմք մեր՝ անսորի (յաշխարհէն Հոռոմոց) գնեմք, վասն զի ոչ յայլ աշխարհի գտանի սա ուրեք,

բայց անդ. հարկաւորիմք անտի գնել զայս՝ ըստ ժամանակին պիտոյից »:

Ինչ է նշանակում այստեղ կերպարան հանդերձից. moda? — բայց կաթողիկոսական զգեստների մասին անտեղի կը լինէր ենթադրել մի moda, որ միայն Հոռոմների աշխարհումն էր գտնվում, և այն էլ՝ արծաթով զնվում: Առաջարկում եմ կարդալ. « Զկերպարան հանդերձիցս՝ զոր ունիմք մեր՝ անտի (յաշխարհէն Հոռոմոց) գնեմք »:

4. « Զլտակս մկրտութեան լուսոյ ».

Փարպեցի (Գ. Գ. էջ 8) մեզ խոստանում է պատմել « Զնւն սրբոյն Գրիգորի ի խոր վիրապէն, և զհանումն Հայաստան աշխարհիս ի խաւարէ, զիտակս մկրտութեան լուսոյ զոր Փրկիչն Քրիստոս ի ձեռն մեծի նահատակին Գրիգորի, բարեխօսութեամբ և սուրբ կուսանաց ծառայեցոյց յաշխարհիս մերում »:

Առաջարկում եմ ուղղել « զլտակս մկրտութեան լուսոյ, զոր .. ծառայեցոյց յաշխարհիս մերում »:

Նոյն էջի վրայ ասվում է. « յոռոգումն գոսացելոց դիոց մարդկան », ուղղելի՛ « տիոց մարդկան »:

5. « Հասնալ քազում գաւառք ».

Պատմագիրը (Դրուագ Ա, էջ 8, տող 16) ասում է. « Զմեծ մասն, զլաւն և զպիտանին և զարգաւանդն աշխարհիս Հայոց՝ ունել ի բաժին արքային Պարսից. քանզի թէպէտեւ հասեալ քազում գաւառք, այլ ի ժառանգութիւն մասին Թաւաւորին Յունաց, սակայն համեմատելին այն միայն՝ Արարտեան աշխարհին »:

Պարզ է որ փոխանակ « հասեալ քազում գաւառք » ի պէտք է կարդալ՝ « հասեալ քազում գաւառք »:

6. « Անձին իւրում եւ զաւակի ».

Փարպեցին (Դրուագ Բ, գլ. Ի, էջ 41, տող 27) ասում է. « Զայս ամենայն չար իմացեալսն անձին իւրում (վարացվաղանի և զաւակի, իմացեալ Սիւնեայ սեպհին անօրինի և տարեալ ի գլուխ »:

Փարպեցի նախորդ էջերում խօսել է վարազվազանի վերայ, բայց ոչինչ չէ ասել նրա որդու մասին: Տրամադիր եմ կարգալ: « Զայս ամենայն չար իմացմունս անձին իւրում եղատկի իմացեալ », և այլն: Այդ ածականի գործածութիւնը, պէտք է ասած՝ միակը չէ նոյն էջի վերայ. « Տեսիլ եղատկի եղեւ վարազվազան ամենայն տոհմի իւրոյ », « հանապազօր նշուակօք », և այլն:

7. « Ամսիտ է եւ լի է սպառնալուծեամբ ».

« Թէ տապացեալ ոք կարօտեսցի զովանալոյ, և մատուցեալ զայն խնդրեսցէ զարձեալ ի Զերմութենէ՝ չպատահէ խրնդրոյն. այլ և խնդրողն յոյժ անմիտ ճանաչի . . . անմիտ է և լի է սպառնալուծեամբ » (Փարպ. Դր. Բ. զԼ. Ի, էջ 41, տող 2):

Այստեղ սպառնալուծեամբ բառը անտեղի է. հարկ է նրան ուղղագրել « ապշութեամբ »:

8. « Զստաւմն գաւուռ քամանայութեան ».

Ա. Դրուագի մէջ (զԼ. ԺԵ, էջ 33) գրում է Փարպեցի. « Եւ ընդ ահեկէ բեմբին՝ որ ցուցաւ քեզ աթոռ չորեքլուսի ծովագոյն սառնակերպ՝ գնատումն գահու քահանայութեանն և թագաւորութեան ցուցանէ »:

Զնատումն հարկ է սրբագրել « գնորդումն »: Հմմտ. էջ 34, տող 30. « Մերձ յերեւոմն պղծոյն անապատի՝ զարձեալ յառնէ թագաւոր յազգեջ Արշակունեաց, և նորդի աթոռ քահանայապետութեան՝ ի շատուիղէ սրբոյն Գրիգորի »:

9. « Զհեշտ պաշտամուն տեսլին ».

Փարպ. (զԼ. Բ. էջ 2, տող 37) գրում է. « Զդիմելն առ նա սրբոյն Գրիգորի՝ գնէտ պաշտաման տեկիւն, զնահատակութիւն նորին սրբոյն »:

Առաջարկում եմ կարդալ՝ ըստ հեշտ պաշտաման տեսլի:

10. « Նորոգատեսիլ մարդոց ».

Փարպ. (Ա. Դր. զԼ. Է. էջ 9) ասում է.

« Իսկ ի լանջակողմանն կամ ի սարահարթ տեղիս սփռեալ, յոր դիպեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց՝ հանդերձս ինչ և ոչ ծաղկաբոյս գոյն կարեկցուցանեն սփռեալքս պարարտարոյքս և պարարտարօտքս և պարարտահամք »:

Փոխանակ նորոգատեսիլ մարդոց պէտք է կարդալ այստեղ « նորոգատեսիլ մարդոց »:

Հ. ԳՈՐԻՍԻԷ, ՆԱԿԱՊԵՏԵՆՆԱ

Շարայայրիկի

ՆՈՐ ՀԱՅԱԳԷՏ ՄԸ

Ուրախութեամբ կը ծանօթացնենք հայ բանասիրութեան զբաղողներուն՝ նոր հայագիտի մը երեւումը: Աւրիզիանոս Բալմիկիի օգոստինեան քահանային՝ իբր յօդուածագիր և արեւելագէտ մը հանջուած էր գուցէ մեր ռուսաբնակ ազգայիններէն, սակայն անցեալ տարւոյն մէջ աւելցուց իր գիտցած բազմաթիւ արեւելեան լեզուաց վրայ նաեւ հայերէնը. որ մեծ օգնութիւն պիտի ըլլայ իր հետազոտութեանց և քննական ուսումնասիրութիւններուն: Մինչեւ ցարդ բազմահմուտ գիտնականս զբաղած էր ռուս, սլաւ, վրացի և յայն ազգութիւններով և անոնց պատմութեամբ: Հայերէն լեզուի ծանօթութիւնը նոր առաքելք մը պիտի բանայ իր աղիւն՝ խուզարկութիւններու ու պատմական առնչութեանց: Ընդհանրապէս հնագիտութեամբ և եկեղեցական պատմութեամբ պարագլուծ կը գտնենք զինքը, ինչպէս կը վկայեն իտալիոյ, ֆրանցիոյ ու Պելճիոյ կրօնական թերթերու մէջ լոյս տեսած իր յօդուածները, որոնց մէջ ցոյց կու տայ հմտութիւն ընդհանուր արեւելեան պատմութեան, աւանդութիւններու ու ծեսերու: Յիշենք միայն մի քանին՝ իր վերջին գրութիւններէն: 1. Բիւզանդական ուսումնասիրութիւնը ի Ռուսիա. 2. Վրաց եկեղեցիի և ամոր սկզբնաւորութիւնը. 3. Վրացիքի թարգմանութիւնը Աստուածաշնչի. 4. Սրբազան երաստութեան մօտ ըրողութիւնը ի Յունաստան. 5. Դուստց եկեղեցական գրականութիւնը. 6. Արգի Գուրգար եկեղեցի. 7. Ռումի եկեղեցիի և ամոր գրականութիւնը. 8. Քրիստոնեայ ճմախօսական բնկերթիւնը յԱթէն. 9. Կեռ շատ պիտի երկարեմք՝ եթէ ամբողջական ցուցակ մը իր գրուածոց՝ յօրինել ըլլար մեր նպատակը. սակայն այսպիսի ցանկ մը այն ատեն կարեւորութիւն պիտի ունենայ մեզ համար, երբ հայկական քրեւութիւններով ալ ճոխացած գտնենք իր յօդուածները. — զայս կը մազթենք նոր հայագիտիս:
